# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

**21.06.2021թ.**

## ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի բուժաշխատողներ՝ բժիշկներ, բուժքույրեր, բուժակներ, մայրապետեր, առողջապահության ոլորտի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի կապակցությամբ:

Այս օրը պատեհ առիթ է անդրադառնալու նաև առողջապահության համակարգի խնդիրներին, ձեռքբերումներին ու ծրագրերին, բայց այսօր միայն ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ եմ ուզում հայտնել ձեր նվիրումի և ձեր կոչմանը հավատարիմ մնալու համար:

Հաշվի առնելով համավարակի և պատերազմի ընթացքում ու այսօր էլ համավարակի դեմ շարունակվող պայքարին ուղղված ձեր պահռելի ու անխոնջ աշխատանքը, ձեր նվիրումն ու համբերատարությունը, երախտագիտության չափաբաժինն է՛լ ավելի է կրկնապատկվում:

Սիրելի՛ բուժաշխատողներ,
Շնորհակալություն ձեր առաքելության համար՝ ուղղված մարդկային կյանքերի փրկության և առողջության պահպանման:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել Կոտայքի մարզի բոլոր բուժաշխատողներին, ինչպես նաև ռազմական բժիշկներին և սահմանամերձ բնակավայրերի մեր բուժաշխատողներին:

Շնորհակալ եմ մեր քաղաքացիների կյանքի ու առողջությանն ուղղված ձեր շուրջօրյա ծառայության պատշաճ իրականացման համար:

Առողջություն ու բարեկեցություն ձեզ և ձեր ընտանիքներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ